

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
նոյեմբերի 15-ի N 1782 - Ն որոշման

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են ստորերկրյա ջրային մարմինների որակի նորմերը և դրանց հիման վրա ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակները:

2. Ստորերկրյա ջրային մարմինների լավ և վատ կարգավիճակները գնահատվում են՝ հիմնվելով ստորերկրյա ջրերի քիմիական և քանակական ցուցանիշների վրա:

3. Ստորերկրյա ջրային մարմինների լավ և վատ կարգավիճակներն ըստ քիմիական ցուցանիշների որոշվում են՝ հիմնվելով քիմիական ցուցանիշի կոնցենտրացիայի արժեքի վրա:

4. Ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակը գնահատվում է լավ, եթե ջրի որակի քիմիական ցուցանիշները գնահատվել են լավ, և ստորերկրյա ջրային մարմնի կարգավիճակը գնահատվում է վատ, եթե ջրի որակի քիմիական ցուցանիշներից որևէ մեկը գնահատվել է վատ:

5. Ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակը և որակի նորմերը՝ ըստ քիմիական ցուցանիշների ներկայացված են N 1 աղյուսակում:

Աղյուսակ N 1

ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՑԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՈՐԱԿԻ
ՆՈՐՄԵՐԸ՝ ԸՍՏ ՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ

ՀՀ	Ցուցանիշներ	Ստորերկրյա ջրային մարմինների լավ կարգավիճակ	Ստորերկրյա ջրային մարմինների վատ կարգավիճակ	Չափման միավոր
		Ջրի որակի նորմ		
1.	Ընդհանուր հանքայնացում	≤ 1000	> 1000	մգ/լ
2.	Տեսակարար էլեկտրահաղորդականություն	≤ 1900	> 1900	մկՍմ/սմ
3.	pH	$\geq 6.5 \leq 9.5$	$\leq 6.5 \geq 9.5$	-
4.	Կոշտություն	≤ 7	> 7	մմոլ/լ
5.	Սուլֆատ իոն	≤ 190	> 190	մգ/լ
6.	Քլորիդ իոն	≤ 190	> 190	մգ/լ
7.	Նատրիում	≤ 150	> 150	մգ/լ
8.	Նիտրատ իոն	≤ 40	> 40	մգ/լ
9.	Նիտրիտ իոն	≤ 0.4	> 0.4	մգ/լ
10.	Ամոնիում իոն	≤ 0.4	> 0.4	մգ/լ
11.	Ֆոսֆատ իոն	≤ 0.3	> 0.3	մգ/լ
12.	Պղինձ	≤ 0.1	> 0.1	մգ/լ
13.	Ցինկ	≤ 0.1	> 0.1	մգ/լ
14.	Քրոմ	≤ 40	> 40	մկգ/լ
15.	Արսեն	≤ 10	> 10	մկգ/լ
16.	Կադմիում	≤ 4.0	> 4.0	մկգ/լ
17.	Կապար	≤ 7.2	> 7.2	մկգ/լ

18.	Նիկել	≤ 20	> 20	մկգ/լ
19.	Ծարիր	≤ 8.0	> 8.0	մկգ/լ
20.	Սելեն	≤ 15	> 15	մկգ/լ
21.	Մոլիբդեն	≤ 40	> 40	մկգ/լ
22.	Բոր	≤ 1.3	> 1.3	մգ/լ
23.	Ֆտորիդ իոն	≤ 1.3	> 1.3	մգ/լ
24.	Այուամին	≤ 0.2	> 0.2	մգ/լ
25.	Երկաթ	≤ 0.2	> 0.2	մգ/լ
26.	Մանգան	≤ 0.04	> 0.04	մգ/լ
27.	Մնդիկ	≤ 0.8	> 0.8	մկգ/լ
28.	Ցիանիդ իոն	≤ 0.04	> 0.04	մգ/լ
29.	Բենզոլ	≤ 1.0	> 1.0	մկգ/լ
30.	Բենզապիրեն	≤ 0.01	> 0.01	մկգ/լ
31.	Պետսոցիդներ, ընդհանուր	≤ 0.5	> 0.5	մկգ/լ
32.	Ալդրին	≤ 0.03	> 0.03	մկգ/լ
33.	Դիելդրին	≤ 0.03	> 0.03	մկգ/լ
34.	Հեպտաքլոր	≤ 0.03	> 0.03	մկգ/լ
35.	Հեպտաքլոր էպօքսիդ	≤ 0.03	> 0.03	մկգ/լ
36.	Պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածիններ, ընդհանուր	≤ 0.08	> 0.08	մկգ/լ
37.	Եռքլորէթիլեն և երկքլորէթիլեն	≤ 7.5	> 7.5	մկգ/լ
38.	1,2-երկքլոր էթան	≤ 2.25	> 2.25	մկգ/լ
39.	Եռհալոմեթաններ, ընդհանուր (գումարային քլորոֆորմ, բրոմոֆորմ, երկբրոմքլորմեթան և բրոմերկքլորմեթան)	≤ 75	> 75	մկգ/լ
40.	Հալոքացախաթթուներ	≤ 45	> 45	մկգ/լ
41.	Էպիքլորոհիդրին	≤ 0.08	> 0.08	մկգ/լ
42.	Ածխաջրածնային ինդեքս	≤ 75	> 75	մկգ/լ

43.	Քլորիտ իոն	≤ 0.2	> 0.2	մգ/լ
44.	Քլորատ իոն	≤ 0.2	> 0.2	մգ/լ
45.	Բրոմատ իոն	≤ 0.01	> 0.01	մգ/լ

6. Ստորերկրյա ջրային մարմինների լավ և վատ կարգավիճակներն ըստ քանակական ցուցանիշների սահմանվում են՝ հիմնվելով ջրավազանային կառավարման պլաններով սահմանված ջրային մարմինների օգտագործելի ջրային ռեսուրսի ծավալի վրա:

7. Ստորերկրյա ջրային մարմնի կարգավիճակը գնահատվում է լավ, եթե միջին տարեկան ջրառի ծավալը (մլն.մ³/տարի) չի գերազանցում ջրային մարմնի օգտագործելի ջրային ռեսուրսի ծավալի 95 տոկոսը:

8. Ստորերկրյա ջրային մարմնի կարգավիճակը գնահատվում է վատ, եթե միջին տարեկան ջրառի ծավալը (մլն.մ³/տարի) գերազանցում է ջրային մարմնի օգտագործելի ջրային ռեսուրսի ծավալի 95 տոկոսը:

9. Ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակի գնահատումն իրականացվում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից՝ հիմնվելով ստորերկրյա ջրերի քիմիական, քանակական ցուցանիշների և մոնիթորինգային տվյալների վիճակագրական վերլուծության վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ